

« — Ո՞ւր գրեմ... »

« — Վրա՛ս գրէ » : —

Հատորի երկրորդ մասը բաղկացած է մանր դիմապատկերներից ու փոքրիկ պատմութիւններից — աւելի լրագրական, ընթացիկ բնոյթ կրող, քեթեւ կտորներ, որոնք, ընդհանրապէս, զըբփի արժէքի վրա առանձին բան չեն աւելացնում: Գրքի հիմնական, մնայուն բովանդակութիւնը վերել յիշած բնութագրերն են, որոնց վարպետն է Պէշիկ-բաշեանը եւ որոնցից մի մասը պէտք է ապրի մեր գրականութեան մէջ Յ. Պարոնեանի «Ջոզեր»-ի կամ Ն. Օտեանի հերոսների հետ:

Ն. Պէշիկբաշեանը Պարոնեանի եւ Օտեանի գործի շարունակողն է մեր մէջ, անհամեմատ աւելի զժւարին համագամբներում: Պարոնեանն ու Օտեանը հող ունէին իրենց ուտերի տակ եւ կենդանի միջավայր ու կենցաղ շուրջը — ամերածեշտ պայմանը երգիծական գրականութեան գոյութեան: Պէշիկբաշե-

անը գուրկ է կենսատու հողից, իսկ միջավայրը խիստ սահմանափակ է: Դրանով պէտք է բացատրել գլխաւորապէս նրա ստեղծագործութեան շրջանակի համեմատական նեղութիւնն ու մշակած նիւթի միանմանութիւնը: Թերեւս, մասամբ դրանով է բացատրուում եւ այն, որ Պէշիկբաշեանի գրականութիւնը փիլիսոփայական եւ ընկերային — քաղաքական խորութիւն ու լայն հորիզոններ չունի: Յ. Պարոնեանի գրածները կարդալուց յետոյ գրեթէ միշտ, Օտեանի գրածներին յետոյ յաճախ լուրջ ապրումներ եւ ունենում — մտածում եւ շատ բաների մասին: Պէշիկբաշեանը աւելի ծիծաղեցնում է, քան ապրեցնում: ճգովեալ հարցեր սովորաբար չի դնում առջեւ, եւ պատասխաններ չի խնդրում ու չի տալիս: Մինչդեռ իսկական երգիծանքը միշտ նպատակաւոր է — ծաղրում է մի բան՝ պաշտպանելու համար մի ուրիշ բան:

Ս. Վ.

### ԲՆՆ. ՆՈՒՐԻԿԵԱՆՆ՝ «Այգեկութեան», վեստ Նիւ Եմբ, 1937

Ահա մի գիրք եւս, որ տեղ պէտք է բռնէ արտասահմանի հայ գրասէրի մատենադարանում: «Այգեկութեան»-ը կարճ պատմածների ժողովածու է, որի հեղինակը՝ Խարբերդի Հիւսէյնիկ գիւղացի՝ իր ծննդավայրն է ներկայացնում այնպէ՛ս յուզիչ ու կարօտով: Իրաւունք ունի Յ. Այգեանը «Յառաջաբան»-ում « խանդավառութեամբ յանձնարարելու » հատորը. Բ. Նուրիկեանը արժանի է նման յանձնարարութեան:

Համաստեղի պէս՝ Բ. Նուրիկեան էլ իր հայրենի գիւղն է երգում, գրական անկեղծ ներշնչումով ու արեւստով: Երբէ, մի կողմից, Նուրիկեանը Թիլատինցիի աշակերտն է, միւս կողմից, բառիս լաւ իմաստով, հետեւողն է Համաստեղի. որի ներկայութիւնը զգացւում է «Այգեկութեան» շատ էջերից:

Մի հանգամանք, սակայն, որ բնաւ չի նաստացնում Նուրիկեանի գործը:

Նուրիկեանի հատորը բաղկացած է շուրջ վեց տասնեակ պատմածներից՝ բաժանած երեք մասի՝ «Գիւղը որ կապրէր», «Անուշ երկիր ազատութեան» եւ երկու «տպաւորութիւններ» Թիլատինցիի մասին: Բոլորն էլ կարճ կտորներ — ամենաերկարը 10 - 12 էջոց — բայց լեցուն ու լիարժէք: Նուրիկեանը գիտէ փչ խօսքերով ու հակիրճ տողերով ազդելու եւ ապրեցնելու արեւստը: Չի սիրում աւելորդաբանութիւններ եւ բաներն ու պատկերները վարպետօրէն դրնում է ճիշտ իրենց տեղը: Ասում է հակառակ եւ մի քանի խօսքով: Կարգացէք նրա « Տղու մը օրագիրը » — մի ամբողջ վէպ: Եւ ինչպէ՛ս հոգեբանօրէն ճիշտ զարգացած: Կարգացէք «Հեղ մըն

ալ կարգա՝ն ու մի՛ յուզվիք: Կամ «Մե-  
ռելները կը յաղթեն»: Եւ շատ ուրիշ-  
ներ:

Նուրիկեանը սիրահարած է իր ծնըն-  
դավայրի վրա. պաշտում է իր գիւղը,  
հայրենի բնութիւնը, լեռներն ու ձորե-  
րը, սրբավայրերն ու աւանդութիւննե-  
րը: Եւ կարօտով ու սրտի բրբռումով  
վերջիշում ու պատկերացնում է խնկելի  
յիշատակները անցեալի: Սէր ու կարօտ  
կայ նրա պատմածքների մէջ, պաշտա-  
մունք հողի եւ մարդու: Եւ տեսէք ի՞նչ  
յուզիչ խօսքեր գիտէ նա. —

« Դաշտն ամբողջ կանանչ ծով է կըտ-  
րէր: Ծառերուն վրա, բուփերուն ծո-  
ցը շատախօս մննդուկներ վէճի են բըռ-  
նւէր. լորերը ցորեններուն մէջ բոյն  
դրեր ու ձագ հաներ են արդէն. անա-  
նուն բոչուններ հարաւէն նոր դարձած,  
անո՛ւշ մեղեդիներ կը ցանցեն անդին :  
Կռուկներու երամը վերը երկինքին վը-  
րանին տակ սեւ գիծ մը կոյորէ: Արա-  
գիլներու գոյգը վարդապետեց ցիփին  
վրա կը կափկափէ. ծիծեռնակները սեւ

նետերու պէս կը սուրան օդին մէջէն:  
Գարուն է, իմ գիւղիս գարունը. չոր  
բարերն անգամ կանանչ խոտ մը կը կը-  
րեն կուրծքերնուն վրա: Բնութեան  
հետ գիւղն ալ կարքնայ, աչքերը կը  
նարթկէ ու նոր սրտով իր նոր աշխա-  
տանքին կը լծւի: Դաշտ ու այգի բաց  
գիրկով կողջունեն գիւղացին եւ իրենց  
լեցուն ծոցին բերքն ու բարիքը կը շը-  
ռայլեն անոր: Ի՞նչ սրտաբուխ նկրում  
է այս որ Նոյի օրերէն ասդին հողն ու  
մարդը իրարու կը կապէ, կը նոյնա-  
ցնէ: Վա՛յ անոր որ այդ կապը կը խը-  
զէ:» (էջ 105)

Նուրիկեանի լեզուն ընտիր հայերէն  
է, նիւթի համեմատ բարբառախառն: Ու-  
նը պարզ, հատու ու պատկերաւոր: Ու-  
նի նուրբ հումոր ու ջերմութիւն: Գի-  
տէ՛ չափ ու կշիռ: Համակած է մարդ-  
կայնական ազնիւ ապրումներով:

«Այգեկութեան»-ը Բ. Նուրիկեանին դը-  
նում է մեր երիտասարդ շնորհալի գը-  
րողների առաջին շարքերում:

Ս. Վ.



## ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նշան Պէշիթարեան՝ «Ծաղկաւար-  
ներ», ծանօթ դէմքեր, ժողովրդական  
տիպեր, 1938, Փարիզ:

Օն. Միլիթարեան՝ «Կարմիր Յոր-  
ձանք», պատմածքներ, 1936, Սոֆիա:

Օն. Միլիթարեան՝ «Վարդան Մամի-  
կոնեան», պատմածք, 1936, Սոֆիա:

Օն. Միլիթարեան՝ «Առօրեայ», պատ-  
մածք, 1937, Սոֆիա:

Բ. Նուրիկեան՝ «Այգեկութեան», Վէստ  
Նիւ - Եոթ, 1937:

Բժ. Իս. Տէրտէրեան՝ «Սիփիլիսը եւ  
նրա բժշկութիւնը», վեներական հիւան-  
դութիւններ, Ա. հատոր, Թեհրան, 1937:

Բժ. Իս. Տէրտէրեան՝ «Ինչո՞ւ պիտի  
չծխեյ», Թեհրան, 1937:

Տօթ. Ն. Տ. Ս. Թաշճեան, «Ատամ-  
նաբուժական առողջաբանութիւն», հա-  
յերէն եւ անգլիերէն, Պոսքըն, 1938:

Մ. Իշխան՝ «Կրակը», բանաստեղծու-  
թիւններ, 1938, Պէյրութ:

Մայիս 28, 1918 - 1938, Քսանաւեակ,  
Հրատ. Հ. Յ. Դ. Ար. Եւր. Կեմուկով-ի,  
1938, Փարիզ:

Հ. Սահակ Կողեան՝ «Հայ արժէքներ  
եւ արժանիքներ», բանաստեղծութիւններ,  
1938, Վիեննա: